ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

Ե/2013- 14.10/617
14.10.2013 թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ «Հայոց արծիվներ» հասարակական կազմակերպության ղեկավար Խաչիկ Ասրյանը 2013թ. հոկտեմբերի 10-ին «Yerkir.am»[1] կայք էջում հանդես է եկել հայտարարությամբ՝ մեջբերում եմ. «Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես ժաննա դ'Արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի»:

2013թ. հոկտեմբերի 10-ին «Yerkir.am»[2] լրատվական միջոցով հրապարակված նյութը Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք այլ լրատվական միջոցների կողմից վերահրատարակվել են, մասնավորապես՝ «hayeli.am»[3], «aravot.am»[4], «asparez.am»[5] և այլն:

Նշված հայտարարությունը հիմք է տալիս մտավախություն ունենալ, որ Խ. Ասրյանը կամ նրա համախոհներն, ատելությամբ լցված լինելով Զարուհի Փոստանջյանի հանդեպ, կարող են փորձ կատարել այս կամ այն եղանակով իրականացնելու Զ. Փոստանջյանի նկատմամբ հաշվեհարդարի վերաբերյալ իրենց սպառնալիքները:

Խաչիկ Ասրյանը իր վերը վկայակոչված հայտարարությամբ հայտնել է ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանի նկատմամբ ֆիզիկական, սադիստական հաշվեհարդար տեսնելու իր պատրաստակամությունը և մտադրությունը:

Չի բացառվում, որ այս սպառնալիքը կարող է, որևէ երրորդ անձանց կողմից իրագործվել Զ. Փոստանջյանի նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի համաձայն «սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը,...» համարվում է հանցագործություն և նախատեսվում է քրեական պատասխանատվություն:

Հայաստանի Հանրապետությունում վերջին շրջանում խարույկի վրա կենդանի այրելուց բացի իրականացվել են այլ հաշվեհարդարներ, այն անձանց նկատմամբ, որոնց վարքագիծը այս կամ այն պատճառով դուր չի եկել բարձրաստիճան հանրապետականներին եւ նրանց թիկնազորերին՝ օրինակ, Վահե Ավետյանը, Ավետիք Բուդաղյանը, DIY ակումբի հրկիզման դեպքը կամ մի շարք այլ դեպքեր:

---

[1] Տես՝ http://www.yerkir.a m/am/news/56545. htm
[2] Տես՝ http://www.yerkir.a m/am/news/56545. htm
[3] Տես՝ http://hayeli.am/article/376663/
[4] Տես՝ http://www.aravot.am/2013/10/10/394986/
[5] Տես http://www.asparez.am/news-hy/merorya_inkvizitorner_hhkic_hy/

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Խաչիկ Ասրյանի կողմից կատարված հայտարարությունը, սպառնալիք է ուղղված Զարուհի Փոստանջյանի և նրա հարազատների դեմ՝ դիմում եմ Ձեզ հարուցել քրեական գործ և համապատասխան պատասխանատվության ենթարկել Խ. Ասրյանին:

Կից ներկայացնում եմ՝

1. www.yerkir.am հրապարակված նյութի օրինակը
2. www.hayeli.am հրապարակված նյութի օրինակը
3. www.aravot.am հրապարակված նյութի օրինակը
4. www.asparez.am հրապարակված նյութի օրինակը:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024

http://hayeli.am/article/376663/

Խաչիկ Ասրյան. Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել

Հոկ 10, 2013Չի մեկնաբանվել Հայելի

«Հայոց արծիվներ» կազմակերպության ղեկավար Խաչիկ Ասրյանը «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանին Yerkir.am-ի հետ զրույցում անվանել է «թուրքի բոստանից զորացրված դաշտամուկ»:

Անդրադառնալով ԵԽԽՎ-ում Զարուհի Փոստանջյանի կողմից Սերժ Սարգսյանին ուղղված հարցին՝ Ասրյանը հայտարարել է, որ ցանկանում է, որ իր խոսքերը լինեն ավելի կոշտ, կոպիտ, եւ այն ուղղում է ոչ թե Զարուհի Փոստանջյան քաղաքացուն, ոչ թե Զարուհի Փոստանջյան կնոջը, ոչ թե Զարուհի Փոստանջյան մորը, այլ՝ «ոմն Զարուհի Փոստանջյան» քաղաքական գործչին: «Նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես Ժաննա Դ'արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի»,- հայտարարել է Խաչիկ Ասրյանը:

Նա կարծիք է հայտնել, որ Հայաստանը յուրաքանչյուր քաղաքացու եւ իր համար ՀՀ-ն, հայոց պետականությունը ամենամեծ ընտանիքն է, իսկ «Հայոց նախագահ» Սերժ Սարգսյանը մեր մեծ ընտանիքի առաջնորդն է ու մեծագույն դերակատարություն է ունեցել հայոց պետականության կայացման մեջ, եւ ոչ միայն մեր հայրենիքում, այլ՝ հատկապես երկիր մոլորակի տարբեր անկյուններում»:

http://www.aravot.am/2013/10/10/394986/

«Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել որպես Ռամիլ Սաֆարովի». Խաչիկ Ասրյան Կարդացվել է 2413 անգամ17 ՄեկնաբանությունՏարածելՏպել18:09 | Հոկտեմբեր 10 2013 yerkir.am. «Հայոց արծիվներ» կազմակերպության ղեկավար Խաչիկ Ասրյանը «Ժառանգություն»խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանին Yerkir.am-ի հետ զրույցում անվանեց «թուրքի բոստանից զորացրված դաշտամուկ»: Անդրադառնալով ԵԽԽՎ-ում Զարուհի Փոստանջյանի հնչեցրած հարցին՝ Ասրյանը հայտարարեց, որ ցանկանում է, որ իր խոսքերը լինեն ավելի կոշտ, կոպիտ, եւ այն ուղղում է ո՛չ թե Զարուհի Փոստանջյան քաղաքացուն, ո՛չ թե Զարուհի Փոստանջյան կնոջը, ո՛չ թե Զարուհի Փոստանջյան մորը, այլ՝ «ոմն Զարուհի Փոստանջյան» քաղաքական գործչին, ով վերջնականապես ցուցադրեց իր թերուցքային վիճակը ինչպես հայրենիքում, այնպես էլ՝ հայրենիքից դուրս»: «Նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես Ժաննա Դ'արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի»,-հայտարարեց Խաչիկ Ասրյանը:

http://www.yerkir.am/am/news/56545.htm

Սաֆարովի. Խաչիկ Ասրյան



16:20 - 10.10.2013

«Հայոց արծիվներ»կազմակերպության ղեկավար Խաչիկ Ասրյանը «Ժառանգություն»խմբակցության պատգամավոր Զարուհի ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻՆYerkir.am-ի հետ զրույցում անվանեց «թուրքի բոստանից զորացրված դաշտամուկ»:

Անդրադառնալով ԵԽԽՎ-ում Զարուհի Փոստանջյանի հնչեցրած հարցին՝ Ասրյանը հայտարարեց, որ ցանկանում է, որ իր խոսքերը լինեն ավելի կոշտ, կոպիտ, եւ այն ուղղում է ո՛չ թե Զարուհի Փոստանջյան քաղաքացուն, ո՛չ թե Զարուհի Փոստանջյան կնոջը, ո՛չ թե Զարուհի Փոստանջյան մորը, այլ՝ «ոմն Զարուհի Փոստանջյան» քաղաքական գործչին, ով վերջնականապես ցուցադրեց իր թերուցքային վիճակը ինչպես հայրենիքում, այնպես էլ՝ հայրենիքից դուրս»:

«Նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես Ժաննա դ'Արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի»,-հայտարարեց Խաչիկ Ասրյանը:

Նա կարծիք հայտնեց, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու եւ իր համար ՀՀ-ն, հայոց պետականությունը ամենամեծ ընտանիքն է, իսկ «հայոց նախագահ»Սերժ Սարգսյանը մեր մեծ ընտանիքի առաջնորդն է, ով մեծագույն դերակատարություն է ունեցել հայոց պետականության կայացման մեջ»:

Ասրյանը կարծում է, որ բոլոր ընտանիքների ներսում էլ լինում են խնդիրներ, որոնք, սակայն, միշտ էլ լուծվում են:

«ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակության անդամները պետք է բարձագույն արժեք ընդունեն եւ նաեւ տարածեն հինավուրց հայ ժողովրդի բարձրագույն խորհրդանիշների՝ զինանշանի, դրոշի, հայոց նախագահի՝ որպես գերագույն գլխավոր հրամանատարի հանդեպ պաշտամունքի գաղափարը, նաեւ որպես առաջնորդապաշտության, այլ ոչ թե երեսուն արծաթով վաճառեն քրիստոնյա հայ ժողովրդի հոգիները՝ ազատություն, ժողովրդավարություն բառերը շահարկելով, խարխլելով հայոց պետականության հիմքերը»,-եզրափակեց Ասրյանը:

http://www.asparez.am/news-hy/merorya_inkvizitorner_hhkic_hy/

Մերօրյա ինկվիզիտորը՝ ՀՀԿ-ից

11 Հոկտեմբեր, 2013 20:10 | ՌեպորտաժՀեղինակ՝ Համլետ Կիրակոսյան

Վաղուց ի վեր հայոց Հիտլեր «պատվանունը» վաստակած տխրահռչակ Խաչիկ Ասրյանը գլխեց բոլոր հանրապետականների «սխրանքը»՝ Զարուհի Փոստանջյանի ստրասբուրգյան հայտնի հարցը մեկնաբանելիս: Եթե մյուս հանրապետականները՝ Գալուստ Սահակյան, Կարեն Ավագյան, Ծմայս եւ մյուսներ, իրենց հոգու եւ մտքի «ճիչը»՝ առ Զարուհու արարքն ու իրենց շեֆ Սերժ Սարգսյանի պաշտպանությունը, արտահայտում էին «թուրք», «ադրբեջանցի» ռասիստական որակումներով, «դավաճան» անվանելու հետադիմական կաղապարներով, նաեւ սեռա-հայհոյանքային տղայական ակնարկներով, ապա նորօրյա հիտլերիկը այդ ամենին գումարեց նաեւ միջնադարյան ինվիզիցիայի եւ ճիզվիտության հանդեպ իր հակումները, նաեւ առ հայոց «արեգակ», «թագավոր» ու պետության «խորհրդանիշ» Սերժ Սարգսյանն ունեցած պաշտամունքի ու սիրո քծնանքային գերադրականությունը:

Իրեն «հայոց արծիվ» հռչակած այս խելապակասը Զարուհի Փոստանջյանին Yerkir.am-ի հետ զրույցում անվանել է «թուրքի բոստանից զորացրված դաշտամուկ», ապա ավելացրել, թե «Նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես Ժաննա դ'Արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի»:

Խաչիկ Ասրյան կոչեցյալի այս «հավատաքննչական» ու ինկվիզիտորական մտքերին կարելի էր այնքան էլ ուշադրություն չդարձնել, եթե չլիներ մի հանգամանք. այս մարդը ոչ միայն իշխող կուսակցության ներկայացուցիչ է, ընդ որում՝ ոչ շարքային ներկայացուցիչ, եւ ի պաշտոնե ներկայացնում է Հայաստանի իշխանությունը, այլեւ փոխնախարար է, ընդ որում՝ երիտասարդության եւ սպորտի, որը ուղղակի առնչություն ունի մատաղ սերնդի, երիտասարդության, նրանց դաստիարակության, մտածողության ու գաղափարախոսության ձեւավորման հետ:

Նա նաեւ գլխավորում է «Հայոց արծիվներ» հասարակական կազմակերպությունը, որի գործունեության մեջ եւս գերակշռողը երիտասարդների դաստիարակությունն է, ու ոչ միայն այնտեղ տարածում է իր վտանգավոր, հետադիմական, միջնադարյան գաղափարները, այլեւ, ըստ ամենայնի, այդ բազմահազարանոց կազմակերպության ներսում բուծում է իր նման արծվիկների:

Այսպիսով, մինչեւ ուղնուծուծը ֆաշիստական ու ինկվիզիտորական գաղափարներով, վարք ու բարքով տոգորված այս մարդուն վստահված է մի շատ կարեւոր ու պատասխանատու գործ, ինչը իսկական խայտառակություն է 21-րդ դարի պետության համար:

Համլետ Կիրակոսյան